

Ուստի Աւետիս Կ. Պոլիս մեկնած է Մելքիսեդեկի Երեւան հասնելէն անմիջապէս ետքը: Թէ որչափ ժամանակ ղեզերեցաւ անիկա Կ. Պոլիս կամ ինչ յաջողութեամբ ետ դարձաւ, չգիտենք:

Աւետիս 1603ին վերադարձած էր Էջմիածին. այս տարւոյն պատահած է իրեն Երեւան Գրիգոր Դարանաղցի, որ այսպէս կ'արձանագրէ իւր ժամանակագրութեան մէջ. «Էին երեք կաթողիկոս ի վերայ մին աթոռոյն. որ էր յոյժ անկարգութիւն. անուն առաջնոյն Դաւիթ եւ երկրորդին՝ Մելքիսեդեկ եւ երրորդին՝ Աւետիս: Սա (Աւետիս) պարկեշտազոյն էր եւ բռն վարդապետութեան ունէր ի վերայ նոցա (այսինքն՝ Դաւիթ եւ Մելքիսեդեկ). բայց հրամանն անիմաստ եւ զազանաբարոյ Մելքիսեդեկին էր. ոչ օրինօք եւ կանոնովք առաքելադիր, այլ կաշառօք եւ բռնութեամբ այլազգեացն յափշտակելով ի Դաւիթն» (52):

1607ին Յովհաննէս սարկաւազ «ի դուռն Ս. Ստեփանոս Նախավկային» ձեռագիր մը կը կազմէ, զոր ապա Տէր Մկրտիչ կը գնէ «Փաջի վանքին» համար «ի հայրապետութեան տեսուն Աւետիս կաթողիկոսին եւ պատրիարկ Վաղարշապատու, ի թագաւորութեան Վրացոյ պարոն Լաւարսափին»⁵:

Աւետիս կաթողիկոս Պարսկական սահմանէն երկրորդ անգամ դուրս կու գայ 1613ին:

⁵ Յ. Թօփչեան, Յուցակ ձեռագրաց Դաղեան խաչիկ վարդապետի, Ա. (Վաղարշապատ 1899), էջ 52: